ԳԱՅԱՆԵ ԱՍԱՏՐՅԱՆ
ՀՊՄՀ Զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի հայցորդ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հոդվածում ուսումնասիրվում են ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող արմատական փոխակերպումները, որոնք հանգեցնում են ընտանիքի կենսագործունեության, կառուցվածքի, սեռատարիքային դերերի տարանջատմանն և փոփոխմանը :

Վերլուծվումեն ՀՀ-ում ընտանիքի ինստիտուտի ճգնաժամի հիմնախնդիրը, ուսումնասիրվում են փոխակերպվող հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությունը ընտանիքի վրա, ընտանեկան կոնֆլիկտների տեսակները, այդ կոնֆլիկտների առաջացման ներքին և արտաքին գործոնները: Ներկայացվում է ընտանեկան կոնֆլիկտների ավարտման տարբերակները, դրանց հաղթահարման հնարավորություններն ու ուղիները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ ընտանիք, ճկնաժամ, կոնֆլիկտաբանություն, փոխակերպվող հասարակություն, անցումային հասարակություն, սոցիալական կոնֆլիկտ:

Ինչպես նշել է Ֆ. Բեկոնը՝ ընտանիքը ոչ միայն մարդկության դպրոց է, այլ նաև հոգեբանական ապաստան արտաքին աշխարհից, փոխադարձ համագործակցության և ապահովագրության խումբ, ուր ալտրուիստիկ եսասիրությունը ծառայում է որպես հաջողության բանալի ‹‹Աստվածային տուն, որտեղ բոլորը միասին են››: Դրա հետ միասին այն քաղաքակրթության հավերժ և անհրաժեշտ հիմքն է:

Ընտանիքը, հանդիսանալով հասարակության հիմնական բջիջը, էական և բազմակողմանի դեր է խաղացել և շարունակում է խաղալ հասարակության կառավարման ու կարգավորման գործում: Առողջ հասարակության հիմքն է հանդիսանում առողջ ընտանիքը, որը ապահովում է հասարակության զարգացումն ու պետության կայունությունը, ապահովում սերունդների համերաշխությունը, մշակութային, ազգային արժեքների պահպանումը ինչպես նաև, պատասխանատվություն է կրում անձի, նրա ինքնագնահատականի, ապագայի նկատմամբ վստահության ձևավորման համար: Ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող արմատական փոխակերպումները անդրադառնում է նաև ընտանիքի կենսագործունեության, կառուցվածքի, սեռատարիքային դերերի փոփոխությանը: Վերոնշյալ փոփոխությունները բնորոշ են փոխակերպվող հասարակությանը, որոնք տեղի են ունենում սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային, սոցիալ-հոգեբանական խնդիրների հետևանքով և հանդիսանում ընտանիքի ինստիտուտի ճգնաժամի պատճառ:

Փոփոխությունների դարաշրջանը, ծնված քաղաքական հակասություններից, ժամանակի ընթացքում ամբողջ մարդկության համար առաջացնում է նոր արդյունք: Հասարակությունը ազատվեց շատ դոգմաներից և մի որոշ ժամանակ ստացավ փորձարկման ազատություն: Կասկածի տակ դրվեց արժեքային ողջ համակարգը, որը ստեղծվել և գոյություն ուներ 70 տարիների ընթացքում: Տ. Եխանսոնի և Ֆ. Միգելի կատարած հետազոտությունները՝ ‹‹Ժամանակակից երիտասարդության մշակույթի կենսաոճը և իդենտիկությունը›› գրքում, հաստատում են, որ 20 հարյուրամյակների ընթացքում անհատականացման պրոցեսը կտրուկ արագացավ, կողմնորոշվելով ըստ արևմուտքում մարդկանց արժեքնե-

րի փոփոխությանը: Նյութական բարեկեցության աճը բնակչության հիմնական մասի համար նյութական և ֆիզիկական անվտանգության ընդհանուր փորձ է: Արևմտյան մարդու արժեքային կողմնորոշիչները աճեցին առաջին հերթին ոչ նյութական ոլորտում: Հոգեբանական աճը, ինքնաիրականացումը, անհատական զարգացումը, յուրաքանչյուր անձի մոտ գրավել էր կենտրոնական տեղ:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հետխորհրդային հասարակությանը բնորոշ է էգալիտար տրամադրվածությունը, ինչպես նաև հասարակության շերտավորումը, չքավորությունը և գործազրկության չտեսնված մասշտաբները: Այս երկու հանգամանքները անհերքելի ազդեցություն են թողնում ընտանիքի ինստիտուտի ճգնաժամի, ինչպես նաև ներընտանեկան կոնֆլիկտների աճին, քանի որ առկա սոցիալ-տնտեսական պայմանների և անձի ինքնաընկալումն ու պատկերացումները խիստ հակասությունների մեջ են միմյանց հետ և նպաստում են կոնֆլիկտայնության աճին:

Փոխակերպվող հասարակության գիտակցությանմեջձևավորվում են հասարակականկառույցինորսկզբունքներ՝ սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում, փոխվում են հասարակության մեջ գոյություն ունեցող կարծրատիպերը և համապատասխանեցվում են տվյալ ժամանակաշրջանի պահանջներին: Հասարակության մեջ տեղի են ունենում կտրուկփոփոխություններ,սակայն անձանց մոտչեն հասցնումձևավորվել-համապատասխանվարքայինմոդելներ, քանիորնրանքկարողենձևավորվելմիայնմիջավայրիերկարատևազդեցություններքո: Ներկա ժամանակաշրջանում ընտանիքում տարբեր սերունդների ներկայացուցիչներ հանդիսանում են բոլորովին տարբեր արժեքների կրողներ, և սերունդներից յուրաքանչյուրը սոցիալականացվել է միմյանցից զգալիորեն տարբերվող ժամանակաշրջանում: Հետևաբար նրանցից յուրաքանչյուրն ունեն միմյանցից տարբերվող պատկերացումներ և սպասումներ ընտանիքում սոցիալական դերերի վերաբերյալ: Տարբեր պատկերացումներով սերունդների ներկայացուցիչները ապրելով արդի հասարակության մեջ, երբ իրականությունը թելադրում է իր պահանջները, իսկ ընտանիքում դեռևս գոյություն ունեն իրականությանը չհամապատասխանող պատկերացումներ դերերի վերաբերյալ, անխուսափելի են դառնում ներընտանեկան կոնֆլիկտները: Մյուս խնդիրն այն է, երբ անհրաժեշտությունից ելնելով անձը կարող է ընդունել սեփականդերային պատկերացումներին չհամապատասխանող կենսաոճ, որն իր հերթին կհանգեցնի ներքին կոնֆլիկտների առաջացմանը: Իսկ այս ամենը հաճախ ընտանիքում միջանձնային կոնֆլիկտների պատճառ է հանդիսանում:

Ուսումնասիրելով անցումային ժամանակաշրջանում տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությունը ընտանիքի վրա, կարելի է եզրակացնել, որ այդ ժամանակաշրջանում տեղի ունեցող սոցիալ- տնտեսական, քաղաքական և արժեքային փոփոխությունները ազդում են ընտանիքում փոխհարաբերությունների վերաձևավորմանը:

Վերլուծելով վերջին տաս տարիների քաղաքացիական կացության ակտերի գրանցման վիճակագրությունը կարելի է տեսնել ամուսնալուծությունների թվի աճ, ինչպես նաև ամուսնությունների թվի նվազում: Ըստ արդարադատության նախարարության քաղաքացիական ակտերի կացության և գրանցման տարածքային բաժինների կողմից տրամադրած վիճակագրության 2012 թվականին ամուսնալուծությունների թիվը կազմել է 3400, իսկ 2013 թվականին դրանց թիվը 3900 էր, ապա 2014 թվականին ամուսնալուծությունների թիվը հասել է 4600-ի:

Ամուսնալուծություններիհարաբերակցությունն ամուսնություններինկատմամբ-

վերջին 3 տարիներինմշտապեսաճումէ: 2012 թ. Առաջին եռամսյակում հազար ամուսնությանը միջինը բաժին էր ընկել 166 ամուսնալուծություն, 2013 թ. առաջին եռամսյակում՝արդեն 195, իսկ 2014 թ. Նույն ժամանակահատվածում՝ 255:

Վերոնշյալ խնդիրների և թվերի ուսումնասիրությունը առավել քան ակտուալ է դարձնում ներընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառների ուսումնասիրությունը և հաղթահարման ուղիների առաջադրումը:

Ընտանիքը որպես ինստիտուտ և փոքր խումբ կարելի է սահմանելհիմնվելով. արյունակցական կապի;կենցաղի ընդհանրության; ընտանիքի անդամների փոխօգնության և համախմբվածության; բարոյական պատասխանատվության վրա [2,էջ17]

1. Կոնֆլիկտաբանության գիտությունը կոնֆլիկտը սահմանում է որպես սոցիալական փոխազդեցության պրոցեսների արդյունքում տեղի ունեցող հետաքրքրությունների, նպատակների, հայացքների հակասությունների լուծման առավել սուր, կտրուկ, էմոցիոնալ ձև է, որը հաճախ ընդանում է փոխհամագործակցող մասնակիցների հակազդեցությամբ՝ զուգորդվելով բացասական էմոցիաներով[3, с 66]:
2. Սոցիալական կոնֆլիկտ ասելով հասկանում ենք միչանձնային փոխհարաբերությունների, սոցիալական խմբերի, ինչպես նաև հասարակության մեջ ընդհանուր առմամբ հակասությունների բարձր աստիճան, որը բնութագրվում է հետաքրքրությունների, նպատակների, սուբյեկտների դիրքորոշումների հակառակ ուղղված բախումներով: Կոնֆլիկտները իրենց հերթին լինում են թաքնված և բացահայտ, սակայն նրանց հիմքում հիմնականում ընկած է երկու և ավելի կողմերի միջևհամաձայնության բացակայությունը [7, том2 с75]

Ընտանեկան կոնֆլիկտը կարելի է սահմանել որպես տարաձայնություններ ընտանիքի անդամների միջև, որի հիմքում ընկած է հայացքների, համոզմունքների, պահանջմունքների, արժեքների անհամատեղելիությունը:

Անհատների փոխհարաբերություններից կախված ընտանեկան կոնֆլիկտները բաժանվում են ամուսինների և յուրաքանչյուր ամուսնու ծնողների միջև, ծնողների և երեխաների միջև, առաջին և երրորդ սերնդի ծնողների և երեխաների միջը:

Ընտանեկան փոխհարաբերություններում սկզբունքային դեր են խաղում ամուսինների միջև կոնֆլիկտները, որի հիմքում հաճախ ընկած են ամուսինների պահանջմունքների բավարարմանանտեսումը կամ անհնարինությունը: Այսպիսով կարելի է առանձնացնել ամուսնական կոնֆլիկտների հիմնական պատճառներ

- ամուսինների հոգեսեռական անհամապատասխանելիություն;

Հոգեբանական համատեղելիությունը ենթադրում է բնավորությունների, խառնվածքների փոխազդեցությունը մարդկանց հուզականային առանձնահատկությունների վրա, որը պայմանավորում է ընտանիքի ընդհանուր հուզական միջավայրը:

Սեռական համատեղելիության և ներդաշնակության բացակայությունը ընտանիքի քայքայման բավականին տարածված, բայց և թաքնված պատճառն է:

- սեփական ‹‹Ես››ի արժևորման պահանջմունքի անբավարարվածություն, արժանապատվության զգացումի անհարգելիություն զուգընկերոջ կողմից;
- դրական էմոցիաների պահանջմունքի անբավարարվածություն, փաղաքշանքի, հոգատարության, ուշադրության և հասկանալու բացակայություն;
- ամուսիններից մեկի հակումը սեփական պահանջմունքների բավարարմանը (ալկոհոլ, թմրանյութ, ֆինանսա-

կան ծախսեր միայն իր համար և այլն);
- անբավարարվածության պահանջմունք փոխօգնության և փոխհամաձայնության, տնային տնտեսության վարման հարցերով, երեխաների դաստիարակման, ծնողների նկատմամբ վերաբերմունքի և այլն;
- տարբերություններ զվարճանալու և նախասիրությունների պահանջմունքների բավարարման մեջ:
- ամուսինների պատկերացումների տարբերությունը ընտանեկան արժեքների նշանակալիության վերաբերյալ
- զարգացածության ցածր մակարդակը
- անհարգալից վերաբերմունքը կնոջ/տղամարդու հանդեպ
- սպառողական վերաբերմունքը ընտանիքի նկատմամբ
- դժվարություններ և հակասություններ հաղթահարելու անկարողություն

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման հավանականության վրա նշանակալից ազդեցություն ունենա և արտաքին ազդակները. Ընտանիքի նյութական վիճակի վատթարացումը, ամուսիններից մեկի (կամ երկուսի) չափից ավելի զբաղվածությունը աշխատանքում, ամուսիններից մեկի կայուն և կրթական կարողություններին համապատասխան աշխատատեղ գտնելու անհնարինությունը, սեփական տան երկարատև բացակայությունը, երեխաներին մանկական հաստատություն տեղավորելու հնարավորության բացակայությունը և այլն:

Ընտանիքի կոնֆլիկտայնության ազդակների ցանկը լիարժեք չէր լինի եթե չնշվի մակրոազդակները, այսինքն ժամանակակից հասարակության մեջ կատարվող փոփոխությունները, ինչպիսին են. Սոցիալական մեկուսացմանաձը, կողմնորոշում դեպի սպառողական մշակույթը, բարոյական արժեքների փլուզումը, այդ թվում նաև ավանդական գենդերային վարքի նորմերի, ընտանիքում կնոջ և տղամարդու ավանդական դիրքի փոփոխումը (այդ փոփոխության հակադիր բևեռներն են հանդիսանում կնոջ լիակատար տնտեսական անկախությունը և տնային տնտեսուհու սինդրոմը), տնտեսական, ֆինանսական, պետության սոցիալական ոլորտի ճգնաժամային դրությունը:

Հոգեբանների հետազոտությունները ցույց են տալիս, որ 80–85% ընտանիքներում կան կոնֆլիկտների առկայություն: Մնացած 15–20%-ի մոտ նշվում է ‹‹վեճերի›› առկայություն տարբեր առիթներով (Վ. Պոլիկարպով, Ի. Զալիգինա):

Առավել հաճախ ընտանեկան կոնֆլիկտները հիմքում չեն կրում լուրջ պատճառներ և տեղի են ունենում չնչինառիթներով, որոնց հիմքում ընկած են առավել լուրջ ու խորքային պատճառներ:

Կոնֆլիկտը կարող է կրել ինչպես կառուցողական այնպես էլ քայքայիչ բնույթ: Օրինակերեխայի անընդունելի վարքը կարող է քննադատվել ընտանիքի կողմից, որը որոշակի դիմադրության արդյունքում ի վերջո ընդունվում է երեխայի կողմից: Նման կոնֆլիկտը կրում է կառուցողական բնույթ, քանի որ ընտանիքին միավորում է, ծառայում երեխայի դաստիարակությանը, նպաստում փախըմբռնման ձևավորմանը:Ընտանիքի հետ աշխատող սոցիալական աշխատողը կարող է ծնողների ուշադրությունը գրավել նմանատիպ իրավիճակներին և նպաստել կոնֆլիկտենրի կառուցողական բնույթի փոխակերպմանը և ընտանիքի անդամների միավորմանը: Իսկ ընտանեկան խնդիրների մեջ սեփական ցանկություններին առաջնահերթություն վերագրելը և անտարբերությունը այլ խնդիրներին հանդիսանում են ապակառուցողական կոնֆլիկտ:

Հաճախ ընտանիքում ապակառուցողական կոնֆլիկտներիավարտըկարող է ընտանեկան փոխհարաբերությունների հիմքերի խարխլման պատճառ հանդիսանալ, որպես հետևանք առաջ բերելով անբարեացակամ վերաբերմունք, ատելության զգացում միմյանց նկատմամբ, ստրեսային վիճակների ավելացում: Այս

իրավիճակներում, որպես կանոն տուժում են բոլորը, առավել շատ՝ երեխաները:

Հոգեբանները առանձնացնում են կոնֆլիկտների ավարտի հետևյալ տարբերակները

1. Պարտադրանք – որոշումների կամային հարկադրանք, որը բավարարում է միայն առաջարկողին: Նման ավտորիտար մոտեցումը ունի անբարենպաստ հետևանքներ ընտանիքի մթնոլորտի վրա, նսեմացվում են ընտանիքի անդամների իրավունքները, արժանապատվությունը, ձեռք է բերվում արտաքին բարեկեցություն, սակայն կարող է հանգեցնել ճգնաժամի:
2. Կոնֆրոնտացիա – կոնֆլիկտի մասնակիցներից ոչմեկը չի ընդունում մյուսի դիրքորոշումը, կուտակվում է բացասական վերաբերմունք փոխհարաբերություններում, կարող է հասնել անձնական վիրավորանքների:
3. Խուսաբում (փախուստ) առաջացած հակասության լուծում փնտրելուց: Ընդհանուր առմամբ կոնֆլիկտը մնում է, ի հանգուցալուծումը ձգձգվում: Որպես դրական հանդիսանում է այն, որ ժամանակ է առաջանում մտածելու, լուծումներ գտնելու և որոշումներ կայացնելու համար:
4. Կոնֆլիկտի հարթեցում: Այն նպաստում է լարվածության թուլացմանը, բարենպաստ փոխհարաբերությունների ձևավորմանը, սակայն միշտ չէ որ հաջողվում է:
5. Փոխզիջում: Արդարացի որոշումներ փնտրելու բացահայտ ձև է: Այստեղ անհրաժեշտ են իրավունքների և պարտականությունների հավասարությունը և փոխզիջումները: Լարվածության թուլացմանը նպաստում են կոնֆլիկտի լուծման հետևյալ պայմանների ապահովումը. վեճի առարկայիսահմանների նեղացում, բացասական էմոցիաների կառավարում, կարողություն և ձգտում հասկանալու միմյանց դիրքորոշումները: Ավանդական հարցը թե ով է մեղավոր, կարելի է փոխարինել ‹‹ինչպես վարվել›› հարցով և չմոռանալ որ վեճի նպատակն է միավորումը այլ ոչ թե հակամարտումը:[6, c. 35–38]

Ընտանեկան կոնֆլիկտների հաղթահարման համար մեծ դեր ունի ընտանիքի միկրոսոցիոլոգիայի, ընտանիքի հոգեբանության տեսությունները և ընտանիքի հետ սոցիալական աշխատանքի մեթոդները:

Ընտանիքի միկրոսոցիոլոգիայում առանձնացնում են կոնֆլիկտի հաղթահարման երեք հիմնական տեսական մոտեցումներ. Սիմվոլիկ ինտերակցոնիզմ, փոխանակման տեսություն և էթնոմեթոդոլոգիան, ինչպես նաև հոգևերլուծական տեսությունը և սոցիոմետրիան որպես հոգեդրամայի տեսական հիմք, վերջին երկու մոտեցումները կիրառական հիմք են հանդիսանում ընտանիքի սոցիոլոգիայի, ընտանեկան թերապիայի և ընտանիքի հետ սոցիալական աշխատանքի համար:Միկրոսոցիոլոգիական տեսությունների միջև տարբերությունները դիտարկվում է ելնելով ուսումնասիրության օբյեկտների առանձնահատկությունից, որը բխում է ընտանիքի վարքի ասպեկտներից, ընտանիքի կենսական փուլերի և հոգեբանական մթնոլորտի առանձնահատկություններից:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ ընտանեկան կոնֆլիկտների պատճառներ են հանդիսանում ինչպես արտաքին՝ սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական, այնպես էլ ներքին՝ սոցիալ-հոգեբանական գործոնները: Հետևաբար ընտանեկան փոխհարաբերությունների ամրապնդման, ներընտանեկան կոնֆլիկտների հաղթահարման պրոցեսը անհրաժեշտ է դիտարկել մակրո և միկրո մակարդակներում:Մակրո մակարդակում դիտարկվում է ընտանիքի նկատմամբ վարվող պետական սոցիալական քաղաքականությունը, ինչըպետք է առավել մեծ ուշադրություն դարձնի սոցիալ-տնտեսական գործոնների հաղթահարմանը (բնակարանային պայման-

ների, զբաղվածության, հանգստի կազմակերպման խնդիրների լուծմանը) և անհրաժեշտ ծառայությունների ստեղծմանն ու հասանելիությանը:

Միկրո մակարդակում դիտարկվում է ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնները, ինչպիսին են անհատական առանձնահատկությունները: Այս երկու մակարդակներում իրականացվող աշխատանքի արդյունավետությունը հնարավոր է ապահովել համապատասխանաբար անհրաժեշտ մասնագետների՝ հոգեբան, սոցիոլոգ, սոցիալական աշխատող, ներգրավման և ընտանիքի աջակցման ծառայություններ օրինակ՝ ընտանիքի աջակցության, ծնողավարման ուսուցումների, վերապատրաստման կենտրոնների ստեղծում:

Գրականություն

1. Сатир В. Вы и ваша семья, М.: Эксмо-Пресс, 2001.
2. Гаспарян Ю. А. Семья на пороге XXI века. СПб.: Петрополис, 1999.
3. Дмитриев А.В. Конфликтология. М.-Гардарики, 2000.
4. Дмитриев А., Кудрявцев В., Кудрявцев С. Введение в общую теорию конфликтов. М., 2003.
5. Левин К. Разрешение социальных конфликтов. СПб.: Речь, 2000.
6. Саляхова Л.И. Родительские собрания: традиционные и нетрадиционные формы. Метод. пособие. М.: Глобус, 2006.
7. Энциклопедиясоциальнойработы.Центробщечеловеческихценностей. М., 1993.

ПРИЧИНЫ ВОЗНИКНОВЕНИЯ КОНФЛИКТОВ В СЕМЬЕ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ В ОБЩЕСТВЕ, ПОДВЕРГАЮЩЕМСЯ ИЗМЕНЕНИЯМ

ГАЯНЕ АСАТРЯН

Соискатель кафедры развития и прикладной психологии Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна

В статье исследуются ключевые изменения, происходящие в современном обществе,которые влияют на жизнедеятельность семейной структуры, на изменения дифференциации возрастно-гендерных ролей.

Нами проанализированы проблемы кризиса института семьи в Армении, изучены типы семейных конфликтов, а также внутренние и внешние факторы их возникновения.

Представлены варианты решения семейных конфликтови пути их преодоления.

REASONS OF FAMILY CONFLICTS AND THEIR OVERCOMING WAYS IN THE TRANSFORMING SOCIETY

GAYANE ASATRYAN

Researcher of the Chair of Development and Applied Psychology, ASPU after Kh. Abovyan

Fundamental transformations of the modern society are presented in the article, which lead to the separation and changes of the family life, structure, gender and age based roles. The issues of the family institution crisis in Armenia are analyzed, and it is investigated the impact of the transforming society changes into the family, the types of family conflicts and the internal and external factors of the conflicts occurrence. Also family conflicts accomplishment options, the opportunities and ways to overcome them are presented.